ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-20/9

ք. Երևան «13» փետրվարի 2020թ.

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Մանոյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Արմեն Ամիրջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 67,252,461 (վաթսունյոթ միլիոն երկու հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ միջուկային անվտանգության	«Միջուկային և ռադիացիոն
կարգավորման կոմիտե	անվտանգության գիտատեխնիկական
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4	կենտրոն» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառն վարչ.	Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ 900011040020	Ինեկոբանկ
ՀՎՀՀ 02705793	ՀՀ 2052022100061001
Գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 02558849
Գ.Մանոյան	Տնօրենի ժ/պ
	Ա.Ամիրջանյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 13 » փետրվարի 2020 թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատես-ված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհա-նուր գինը/ՀՀ դրամ	Ընդհա-նուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամ-կետը
1	50531140-1	ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կարիքների համար փորձաքննության ծառայության (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման մանրամասն տեխնիկական բնութագիրը բերված է հավելված 1.1-ում Փորձաքննության ծառայությունների մատուցման համար պահանջվում է լիցենզիա. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծման և այլ փաստաթղթերի փորձաքննության ԼԻՑԵՆԶԻԱ	դրամ	67252461	1	Ք.Երևան Տիգրան Մեծի 4	25.12. 2020

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
** Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի կողմից առաջարկված պատվեր - առաջադրանքների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Գլխավոր քարտուղար
Գ.Մանոյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Միջուկային և ռադիացիոն
անվտանգության գիտատեխնիկական
կենտրոն» ՓԲԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
Ինեկոբանկ
ՀՀ 2052022100061001
ՀՎՀՀ 02558849
Տնօրենի ժ/պ
Ա.Ամիրջանյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1.1
« 13 » փետրվարի 2020թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2020 թվականին ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման

1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն

1.1 *Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, կարգավորող փաստաթղթերի նախագծերի, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վտանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն:*

- Ներկայացված տեխնիկական որոշումների, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերվող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
- Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում (անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ):
- Ներկայացված հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում և վերլուծությունների կատարում (անհրաժեշտության դեպքում):
- Փորձագիտական եզրակացության մշակում:

1.2 *ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու 32-րդ բեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ գոտու ու միջուկային վառելիքի հետ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:*

- Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում:
- Ներկայացված հաշվարկների ստուգման համար Կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի ակտիվ գոտու մաթեմատիկական մոդելի ձևափոխում:
- Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում:
- Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում:
- Եզրակացության մշակում:

2. ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգում

2.1 *Շահագործման ժամկետի երկարաձգման շրջանակներում ներկայացվող փաստաթղթերի փորձաքննություն:*

- *1-ին և 2-րդ դասի անվտանգության տարրերի ամրության և ջերմահիդրավլիկ հաշվարկների, տեխնիկական վիճակի եզրակացության ու մնացորդային ռեսուրսի հիմնավորման վերաբերյալ հաշվետվությունների դիտարկում.*
  - ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
  - 1-ին և 2-րդ դասի տարրերի վերաբերյալ կատարված հաշվարկներում կիրառված սահմանային պայմանների և արդյունքների դիտարկում:
  - Ջերմահիդրավլիկ ստուգողական հաշվարկների կատարում ըստ անհրաժեշտության:
  - 1-ին և 2-րդ դասի տարրերի ներկայացված մեխանիկական վերլուծությունների դիտարկում:
  - Եզրակացության մշակում:
- *ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանը նախապատրաստման ծրագրի և դրան կից փաստաթղթերի դիտարկում.*
  - ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
  - Շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների ներդրման փաստաթղթերի դիտարկում:
  - Ռեսուրսը սպառած տարրերի փոխարինման միջոցառումների հիմնավորման փաստաթղթի դիտարկում:
  - Շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում էներգաբլոկի անվտանգության հիմնավորման փաստաթուղթերի դիարկում:
  - Եզրակացության մշակում:

- *ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում վերականգնվող տարրերի գոյապաշարի կառավարման ծրագրի փորձաքննություն.*
    - ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում վերականգնվող տարրերի գոյապաշարի կառավարման ծրագրի ամբողջականության ստուգում:
    - ՀԱԷԿ-ի ծերացման ծրագրի համապատասխանության ստուգում ՀՀ ՄԱԿԿ նախագահի 16.05.2017թ. № 125-Ա հրամանով հաստատված «Ատոմային էլեկտրակայանների անվտանգության համար կարևոր համակարգերի ծերացման կառավարման կարևոր համակարգի նկատմամբ պահանջներին»:
    - Փորձագիտական գնահատականների կատարում և եզրակացության մշակում:

3. ՀՀ ՄԱԿԿ-ի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ

3.1 *ՋՋԷՌ-440 ռեակտորի ակտիվ գոտում բորաթթվի նոսրացման (boron dilution) վթարի մոդելավորում (մասնակցություն ՋՋԷՌ ռեակտորներ շահագործող երկրների կազմակերպության AER-DYN-004 հաշվարկային հենանիշին)՝ ՀԱԷԿ-ի անվտանգության վերլուծության համար օգտագործվող դինամիկ մոդելների վալիդացիայի նպատակով:*

- Ակտիվ գոտու նեյտրոնաֆիզիկական մոդելի լրամշակում՝ այն համապատասխանեցնելով հենանիշի պայմաններին:
- Ռեակտորի ջերմահիդրավլիկ մոդելի լրամշակում՝ այն համապատասխանեցնելով հենանիշի պայմաններին:
- Լրամշակված մոդելների համակցում:
- Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում:
- Մոդելավորման արդյունքների վերլուծություն:
- Ստացված արդյունքների համադրում հենանիշի մյուս մասնակիցների կողմից ստացված արդյունքների հետ:
- Հաշվետվության մշակում՝ ներառյալ եզրակացություն մոդելի վալիդացման վերաբերյալ:

3.2 *Ընտրված ծանր վթարային իրավիճակներում ռադիոակտիվ նյութերի շրջակա միջավայր արտանետման քանակների վերագնահատում և JRODOS համակարգի համար անհրաժեշտ տվյալների մշակում:*

- Ընտրված ծանր վթարների համար MELCOR ծրագրով մշակված ՀԱԷԿ-ի մոդելի լավարկում՝ հաշվի առնելով ՀԱԷԿ-ում կատարված վթարային համակարգերի արդիականացումը և ընտրված ծանր վթարների համար վերլուծությունների կատարում.
    - առաջին կոնտուրի գլխավոր շրջանառության խողովակաշարի (ԳՇԽ) պատռվածք,
    - ճնշման փոխհատուցիչը (ՃՓ) առաջին կոնտուրի հետ միացնող խողովակաշարի պատռվածք,
    - ՀԱԷԿ-ի ամբողջական հոսանքազրկում,
    - առաջին կոնտուրից դեպի երկրորդ կոնտուր արտահոսքով պայմանավորված վթար:
- Ստացված արդյունքների հիման վրա JRODOS համակարգի համար անհրաժեշտ տվյալների պատրաստում և մուտքագրում JRODOS համակարգ:

3.3 *Առաջին կոնտուրից 32 մմ համարժեք տրամագծով արտահոսքի դեպքում ռեակտորի իրանի փխրուն քայքայում (PTS) առաջացնող սցենարի հետազոտում և հնարավոր պաշտպանիչ միջոցառումների առաջարկում:*

- Հաշվարկների համար անհրաժեշտ սկզբնական և սահմանային պայմանների ընտրություն:
- RELAP5 ծրագրային փաթեթի օգտագործմամբ մշակված ՀԱԷԿ-ի մոդելի լավարկում ռեակտորի իրանի ջերմաստիճանը ճշգրիտ գնահատելու համար:
- 32 մմ համարժեք տրամագծով արտահոսքով վթարային սցենարների հաշվարկների կատարում:
- Ստացված արդյունքների հիման վրա, ռեակտորի իրանը փխրուն քայքայումից պաշտպանելու համար հնարավոր պաշտպանիչ միջոցառումների առաջարկում:
- Եզրակացության մշակում:

3.4 *Ցիկլիկ պլանի վերաբերյալ առաջարկի մշակում:*

ՀՀ ՄԱԿԿ-ի պատվերով 2018 թվականին Կենտրոնը վերլուծել է 2008-2018թթ. ժամանակահատվածում ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից ՀԱԷԿ-ում իրականացված տեսչական ստուգումները, այդ թվում՝ տեսչական ստուգումների թեմաները, հաճախականությունը, դիտարկված հարցերը, հայտնաբերված շեղումները, ներկայացված կարգադրագրերը և այլն, որի հիման վրա դուրս են բերվել ՀՀ ՄԱԿԿ-ի համար արդիական խնդիրները: Նաև համեմատվել են ցիկլիկ պլանում և տեսչական ստուգման հրահանգում ներկայացված ստուգման ենթակա թեմաները, որի արդյունքում բացահայտվել են որոշակի անհամապատասխանություններ:

Վերլուծության արդյունքներով և ԱԷՄԳ IRRS առաքելության շրջանակներում ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից իրականացված ինքնագնահատման արդյունքների և առաքելության կողմից տրված որոշ առաջարկությունների հիման վրա տեսչական ստուգումների հրահանգի/ուղեցույցի և ցիկլիկ պլանի նախագծի մշակումն արդիական խնդիր է:

- 2018 թվականին կատարված վերլուծության և ԱԷՄԳ առաքելության եզրակացությունների և առաջարկների քննարկում ՀՀ ՄԱԿԿ-ի հետ:
- Ցիկլիկ պլանի թեմաների խմբավորման մոտեցման մշակում:
- Ցիկլիկ պլանի թեմաներով տեսչական ստուգումների պարբերականության որոշում:
- Ցիկլիկ պլանի թեմաների նկարագրություն, հնարավոր գործիքների և միջոցների օգտագործման տիրույթի որոշում:
- Ցիկլիկ պլանի նախագծի մշակում:

3.5 Ռադիացիոն անվտանգության և պաշտպանության բնագավառի կարգավորող փաստաթղթերի հարմոնիզացում ԵՄ դիրեկտիվների և նոր օրենքի նախագծի հետ:

- Ռադիացիոն անվտանգության և պաշտպանության բնագավառի միջազգային փորձի ուսումնասիրում:
- «Ճառագայթային անվտանգության և պաշտպանության պահանջներ» փաստաթղթի լրամշակում:

3.6 Ռադիոակտիվ թափոնների կառավարման բնագավառի կարգավորող փաստաթղթերի հարմոնիզացում ԵՄ դիրեկտիվների և նոր օրենքի նախագծի հետ:

- Ռադիոակտիվ թափոնների կառավարման բնագավառի միջազգային փորձի ուսումնասիրում:
- «Ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման պահանջներ» փաստաթղթի լրամշակում՝ փաստաթղթի նախագծի դիտարկման արդյունքում ներկայացված առաջարկների և դիտողությունների հիման վրա:
- «Ռադիոակտիվ թափոնների գրանցման կարգ» փաստաթղթի նախագծի մշակում:
- Ռադիոակտիվ թափոնների կառավարման բնագավառում անհրաժեշտ իրավական ակտերի ցանկի մշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ:

3.7 Ռադիոակտիվ թափոնների պահեստարանների և/կամ գերեզմանոցների անվտանգության գնահատման համակարգչային մոդելավորման կոդերի և ճառագայթային պաշտպանության գնահատման «MicroShield» և «PCXMC» ծրագրային միջոցների հնարավորությունների ուսումնասիրություն:

- Ծրագրային միջոցների հնարավորությունների ուսումնասիրություն, դրանց օգտագործման նպակահարմարության գնահատում:
- Ծրագրային միջոցների օգտագործման վերաբերյալ առաջարկի ներկայացում:

3.8 «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ նոր օրենքի և «Անվտանգության պարբերական գնահատման նկատմամբ պահանջներ» փաստաթղթի նախագծերի լրամշակման աշխատանքներ:

- Նոր օրենքի նախագծի վերջնական տարբերակի մշակում՝ համաձայն ՀՀ ՄԱԿԿ-ի և միջազգային փորձագետների կողմից տրված դիտողությունների ու առաջարկությունների:
- «Անվտանգության պարբերական գնահատման նկատմամբ պահանջներ» փաստաթղթի վերջնական տարբերակի մշակում՝ համաձայն ՀՀ ՄԱԿԿ-ի դիտողությունների:

3.9 ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի անվտանգության հավանականային գնահատման (ԱՀԳ) և ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի խմբերի աշխատանքային ծրագրերով սահմանված հետազոտական խնդիրներ:

- ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ԱՀԳ աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, մասնակցություն աշխատանքային խմբի գործունեության պլանավորմանը:
- ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

4. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ռադիացիոն անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ

4.1 Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի և Համատեղ կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության համապատասխան մասերի և միջազգային փորձագիտական հանրության կողմից տրված հարցերի պատասխանների մշակում:

- Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության վերաբերյալ կոնվենցիայի մասնակից երկրների կողմից տրված հարցերի պատասխանների մշակում՝ Կենտրոնի իրավասությունների շրջանակում:
- «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» Համատեղ Կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության մշակման աշխատանքների համակարգում՝ Կենտրոնի իրավասությունների շրջանակում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից կազմակերպված քննարկումներին:
- Քննարկումների արդյունքում ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից տրված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա Կենտրոնի պատասխանների լրամշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ (ըստ անհրաժեշտության):
- Քննարկումների արդյունքում ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից տրված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա ազգային հաշվետվությոն լրամշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ (ըստ անհրաժեշտության):

4.2 Տեխնիկական աջակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից իրականացվող ստուգումներին և լիցենզավորման, ներառյալ թույլտվությունների տրամադրման գործունեությանը:

- ՀՀ ՄԱԿԿ-ի ճառագայթային անվտանգության մասով 2021 թ. ստուգման ենթակա օբյեկտների ցանկի վերաբերյալ առաջարկի մշակում:
- ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից իրականացվող ստուգումների ընթացքում, ներառյալ փոխադրման գործընթացի ստուգումները, աջակցություն հետևյալ ուղղություններով՝ ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ, դոզիմետրիկ և ռենտգենյան ճառագայթահարիչների երկարատև կայունության չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:

- Կարգավորող հսկողությունից դուրս գտնվող ռադիոակտիվ աղբյուրների կամ ռադիոնուկլիդներով աղտոտված տարածքների և իրերի հայտնաբերման վայրերում ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ և դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:
- ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից իրականացված ստուգումների ժամանակ լիցենզավորված անձի կողմից ներկայացված ճառագայթային անվտանգության ապահովման վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից մաքսային ստուգման կետերում ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման վերաբերյալ ՀՀ ՄԱԿԿ ներկայացված փաստաթղթերի՝ հաղորդագրությունների, չափման հաշվետվությունների, բժշկական տեղեկանքների և այլ տեղեկությունների, դիտարկում և եզրակացությունների նախագծի պատրաստում:
- Միջուկային և ռադիոակտիվ նյութերի, գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ գործունեության լիցենզավորմանն առընչվող փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:
- ՀՀ ՄԱԿԿ-ի անձնակազմի արտաքին ճառագայթահարման դոզաների հսկողություն՝ անհատական դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:

4.3 *ՀՀ ՄԱԿԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:*

- ՀՀ ՄԱԿԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի՝ ներառյալ իոնացնող ճառագայթման աղբյուրների ազգային ռեգիստրի (RASOD), լիցենզիաների և թույլտվությունների ռեգիստրի (AUTHORIZATION), իոնացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող/օգտագործած օբյեկտների ռեգիստրի (LICENSEES), քննությունների անցկացման էլեկտրոնային համակարգի (TESTING), տեսչական գործունեության գրանցման ռեգիստրի (INSPECTION), անհատական դոզաների գրանցման ռեգիստրի (OCCUDOSE) տեխնիկական սպասարկում և կատարելագործում (ըստ անհրաժեշտության), համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի, տեսախցիկների համակարգի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:
- Ռադիոակտիվ թափոնների կառավարման բնագավառում աշխատող անձնակազմի ճառագայթային անվտանգության վերաբերյալ գիտելիքների ստուգման հարցաշարի մշակում:

4.4 *Աջակցություն միջուկային տեղակայանքներում և ռադիոակտիվ աղբյուրների հետ կապված պատահարների վերաբերյալ հաշվետվությունների (IRS, INES) և միջուկային տեղեկատվության (INIS) ԱԷՄԳ-ի համակարգերում մասնակցության հետ կապված ՀՀ ՄԱԿԿ-ի սրանձնած պարտականությունների կատարմանը:*

- IRS համակարգին ներկայացնելու համար ՀԱԷԿ-ում տեղի ունեցած պատահարների մասին տեղեկությունների հավաքում և գնահատում:
- IRS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:
- ԱԷՄԳ-ի IRS և INES համակարգերի տվյալների բազայում առկա միջուկային տեղակայանքներում տեղի ունեցած պատահարների տեղեկատվության վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀԱԷԿ-ի անվտանգության տեսակետից կարևոր պատահարների վերաբերյալ ՀՀ ՄԱԿԿ-ին տեղեկատվության տրամադրում:
- INIS համակարգին ներկայացնելու համար ՀՀ գիտական ամսագրերում տպագրված և INIS-ի թեմատիկային վերաբերվող հոդվածների մասին տեղեկությունների հավաքում:
- INIS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:

4.5 *Աջակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի վթարային կենտրոնի և պահեստային կետի աշխատանքներին:*

- Մասնակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի վթարային կենտրոնի վարժանքների կազմակերպմանը և անցկացմանը.
  - վարժանքների սցենարների մշակում,
  - վարժանքների անցկացում,
  - վարժանքների արդյունքների հիման վրա վթարային ընթացակարգերի վերանայման առաջարկի մշակում,
  - ՀՀ ՄԱԿԿ-ի վթարային կենտրոնի անձնակազմի համար ուսումնական դասընթացների անցկացում:
- Վթարային ընթացակարգերի վերանայում:

5. Նոր մասնագետների պատրաստում ՀՀ ՄԱԿԿ-ի և Կենտրոնի համար

5.1 *ՀՀ ՄԱԿԿ-ի և Կենտրոնի համար նոր մասնագետների պատրաստման աշխատանքներ (2 պատրաստվող մասնագետ):*

- Մասնագետների պատրաստման ծրագրերի մշակում/վերամշակում:
- Մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում/վերամշակում:
- Նոր պատրաստվող մասնագետների համար դասընթացների փուլերի կազմակերպում և անցկացում:
- Նոր պատրաստվող մասնագետների գիտելիքների պարբերական ստուգում:
- Ճառագայթային անվտանգության և պաշտպանության բնագավառի մասնագետների պատրաստման/վերապատրաստման ուսումնական ծրագրի վերամշակում:

6. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգ

6.1 *Վաղ ահազանգման ռադիացիոն մոնիթորինգի համակարգի (Early Warning Radiation Monitoring System) սպասարկում:*

- Թվով 32 ստացիոնար ռադիացիոն մոնիթորինգի կայանների և թվով 2 շարժական սպեկտրոմետրիկ կայանների սպասարկման աշխատանքների իրականացում:

- Հաշվետվության մշակում:

6.2 *ՀՀ բնակավայրերում շրջակա միջավայրի ճառագայթային չափումներ:*

- Ռադոն գազի և գամմա ճառագայթման բնական ռադիացիոն ֆոնի չափումների իրականացման համար վայրերի ընտրություն և ՀՀ ՄԱԿԿ-ի հետ համաձայնեցում, չափումների պլանի մշակում:
- Չափումների իրականացում և արդյունքների վերլուծություն:
- ԱԷՄԳ տարածաշրջանային STEAM պրոյեկտի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարում, ներառյալ՝ ռադոն գազի վերաբերյալ բնակչության տարբեր խմբերի տեղեկացվածության աստիճանի գնահատման հարցաթերթիկի թարգմանություն, հարցման կատարում և հարցման արդյունքների մշակում:
- Հաշվետվության պատրաստում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4	Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.	Ինեկոբանկ
ՀՀ 900011040020	ՀՀ 2052022100061001
ՀՎՀՀ 02705793	ՀՎՀՀ 02558849
Գլխավոր քարտուղար	Տնօրենի ժ/պ
Գ.Մանոյան	Ա.Ամիրջանյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » փետրվարի 2020թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
1	50531140/1	Փորձա-քննության ծառայություն	-	-	6727980.0	23547930	23547930	23547930	40367880	40367880	40367880	67252461	67252461	67252461	67252461

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտե
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Գլխավոր քարտուղար
Գ.Մանոյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Միջուկային և ռադիացիոն
անվտանգության գիտատեխնիկական
կենտրոն» ՓԲԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
Ինեկոբանկ
ՀՀ 2052022100061001
ՀՎՀՀ 02558849
Տնօրենի ժ/պ
Ա.Ամիրջանյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
« 13 » փետրվարի 2020թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«13» 02. 2020թ. կնքված
ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն